ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

13 հոկտեմբերի 2014թ. թիվ 20-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 346-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի պահանջը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի «Հանձնման-ընդունման ակտի ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու մասին» թիվ 346-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

1) Հրամանով հաստատված հավելված N 1-ի աղյուսակից հետո լրացնել նոր աղյուսակ հետևյալ բովանդակությամբ.

<<

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՖՆ 000347

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանա-կահատվածի համար (սյ 1+սյ 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տար-բերությունը (սյ 4-սյ 3)	Տարբերության պատճառը (սյ. 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյ. 5-ում նշված տարբերության պարզաբա-նումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

>>:

2. Հրամանով հաստատված հավելված N 2-ում լրացնել նոր պարբերություն հետևյալ խմբագրությամբ.

<<

ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ <<ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ>>

1. «Ա» սյունակում լրացվում է համապատասխան ծրագրի անվանումը կամ քաղաքականության միջոցառման անվանումը, մասնավորապես՝

1) ծառայություններ հանդիսացող քաղաքականության միջոցառումների դեպքում լրացվում է համապատասխան ծառայության անվանումը,

2) ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման, կառուցման կամ հիմնանորոգման դեպքում՝ համապատասխան ակտիվի անվանումը,

2. «Բ» սյունակում լրացվում են տվյալ քաղաքականության միջոցառումը նկարագրող ոչ ֆինանսական չափորոշիչները կամ դրանց նկարագրությունը:

3. «գ» սյունակում լրացվում է համապատասխան չափորոշչի տեսակի անվանումը, մասնավորապես՝

1) «Ծառայություններ» քաղաքականության միջոցառումների դեպքում՝ «քանակական» կամ «ժամկետայնության»,

2) «Ֆիզիկական կապիտալ (ակտիվների ձեռքբերում, կառուցում կամ հիմնանորոգում)» քաղաքականության միջոցառումների դեպքում՝ «քանակական», «ակտիվի ծառայության կանխատեսվող ժամկետը», «փոխարինվող ակտիվների նկարագրությունը», «ազդեցությունը կազմակերպության կարողությունների զարգացման վրա»,

3. Աղյուսակում քանակական, որակական և ժամկետայնության ցուցանիշներից որևիցէ մեկի կիրարկման անհնարինության դեպքում՝ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ-ին կից ներկայացվում է բացատրություն վերջինիս կիրարկման անհնարինության վերաբերյալ:>>:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ